ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0077, ք. Երևան, Մ. Մաշտոցի պողոտա 47

Ե/963-22
09 Հունիսի, 2022թ.

«ԶՎԱՐԹՆՈՑ»
ԱՎԻԱՕԴԵՐԵՎՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԹԱԹՈՒԼ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ
(Հասցե՝ ք. Երևան, օդանավակայան Զվարթնոց 2)

Հարգելի՛ պարոն Հայրապետյան,

«Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների ոլորտում մրցակցության ապահովման և խտրականության բացառման նպատակով ՀՀ պետական վերահսկողական ծառայությունն իրականացնում է մշտադիտարկում, որի շրջանակներում 2022թ. հունիսի 8-ին գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված ԶՎԱՐԹՆՈՑ ԱՎԻԱՕԴԵՐԵՎՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված ԶԱՕԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-22/20 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) վերլուծությամբ արձանագրվել է հետևյալը.

Հրավերի պայմանագրի նախագծին կից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ձեռքբերվող «ԱՎՏՈՄԵՔԵՆԱ» գնման առարկաների բնութագրերում առկա են կոնկրետ չափորոշիչներ (օրինակ՝ շարժիչը- ոչ պակաս 2.5լ, ոչ պակաս 188 ձ/ուժ /բենզինային/ վառելիքի ծախսը, ոչ ավել 9.5լ, երկ./լայն./բարձ.-ոչ պակաս 4870x1840x1450 մմ փոխանցման տուփը ստեպտրոնիկ, ոչ պակաս 6 աստիճան, թափքի գույնը՝ մոխրագույն մետալիկ, 8 դյույմ TFT դիսպլեյ), որոնց համակցումը հանգեցնում է կոնկրետ ապրանքի ձեռքբերման:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Գնումների գործընթացը հիմնվում է պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման

սկզբունքների վրա», իսկ 13-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Գնման առարկայի բնութագրերը՝ պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը»:

Միաժամանակ՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 22-րդ կետով սահմանված է նաև՝ «Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ...»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Հրավերում կատարել համապատասխան փոփոխություններ, այն համապատասխանեցնելով «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջներին և արդյունքների մասին տեղեկացնել Ծառայությանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ **ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Կատարող՝ *Սահակ Գյուլինյան*
Ստորաբաժանում՝ *Գնումների գործընթացների վերահսկողության վարչություն*
Հեռ.՝ *010 31 31 59*